

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ-ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ Տ. Տ. ԳԵՎՈՐԳ Զ-Ի ԿՈՆԴԱԿԸ

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹՅԱՆ
ՊԱՏՈՒԻՐԱԿԱԼ ՆԱԽԱԳԱՀ՝

ՎԱՍԵՄԱՇՈՒՔ ԱՌԱՔԵԼ ՆՈՒԲԱՐԻՆ

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ՝

ԱՐԳՈՅԱՊԱՏԻՎ ԱՐՇԱԿ ԳԱՐԱԳԵՈԶՅԱՆԻՆ

ՎԱՐԻՉ-ՊԱՏՎԻՐԱԿ՝

ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ ՎԱՀԱՆ ՄԱԼԵԶՅԱՆԻՆ

ԵՎ ՄԻՈՒԹՅԱՆ ՈՂՋ ՊԱՏՈՒԱՐԺԱՆ ՈՒ ԵՐԱԽՏԱՇԱՏ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻՆ

ՄԻԱՄՆԱԷՋ Ե. ՏԱՃԱՐԻՑ ԵՎ ՆԱԽԱՄԵԾԱՐ ՄԱՅՐ ԱԹՈՌԻՑ
ՈՂՋՈՒՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՎ ՕՐՀՆՈՒ ԹՅՈՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

Ավելի քան քառասուն տարի առաջ, իմաստուն և ազնիվ նախաձեռնությամբ բազմաբախտ և հայրենասեր լուսահոգի Պողոս Նուբար Փաշայի, հիմքը դրվեց Հայ Սփյուռքի մեծագույն Ազգային Հաստատության—Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության։ Եգիպտոսի Բարեգործական-ի համեստ անվամբ սկիզբն առած այս հաստատությունը՝ շնորհիվ ազգանվեր հիմնադրի անխոնջ ջանքերի, նյութական զոհողության, վարչական ձիրքի, կորովի նկարագրի, բարոյական հեղինակության, շատ չանցած, դարձավ հայ կյանքի խոշորագույն և հուսադրիչ երևույթներից։

Հիշատակաց արժանի ազգանվեր Հիմնադրի շուրջը համախմբվեցին և անշահախնդիր գործակիցը դարձան անբասիր, շրջահայաց և ձեռնհաս ազգային գործիչներ, բարերարներ, որոնց համերաշխ գործունեությամբ, նյութական զոհողության պատրաստակամությամբ և բարձր հեղինակությամբ «Եգիպտոսի Բարեգործականը» վերածվեց Համազգային Կազմակերպության։

Բարեգործ նվիրատուների և կտակավանդ բարերարների անսահման վստահության արժանացած Հայկական Բարեգործական Ընդհանուր Միությունը տիրացավ միլիոնների կարողության, որ ամբողջապես և արդյունավետ կերպով ի սպաս դրվեց Հայ ժողովրդի և նորա կարոտյալ զավակների։

Ազգային մշակույթի պես-պես ձեռնարկություններ, ժողովրդական լուսավորության բազմաթիվ հաստատություններ, ազգային, եկեղեցական և աստուածահաճո այլ հիմնարկություններ ծնունդ առին և ապահովվեցին ի պետս և ի փառս Հայ ժողովրդի՝ շնորհիվ ազգանվեր այս մեծ Միության։

Երախտաշատ մեծ Հիմնադրի՝ Վսեմաշուք Պողոս Նուբար Փաշայի տարաժամ մահից հետո ևս Բարեգործականը շարունակեց յուր

արդյունավետ և ազգաշահ գործունեությունը՝ հանդիսանալով Հայ Սփյուռքի ազգային-խնամատարական խոշորագույն կենտրոնը։ Ընկերության վաղեմի գործիչներին և հին բարեբարներին ավելացան շատ նորերը, որոնք հավատարիմ մնացին Միությունը կյանքի կոչող և ոգեշնչող հայրենասեր մեծանուն Հայի աղնիվ ավանդներին և հիշատակին։

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության արդի ղեկավարները ևս մեծագույն եռանդով և անձնվիրությամբ շարունակում են ընթանալ նույն փրկարար շավղով, վառ պահելով ձեր սրտում նուրբարյան աղնիվ ավանդները։

Մեծ է Ձեր երախտիքը Հայ Սփյուռքի ազգապահպանման սրբազան գործում։ Ազգասիրական Ձեր այդ աղնիվ գործունեության լավագույն և նորագույն օրինակը տվեցիք այսօր ևս՝ մեծագույն ոգևորությամբ ու հաջողությամբ գլուխ բերելով մեկ միլիոն դոլարի հանգանակությունը՝ ի պետս բազմահազար հայրենադարձ հարազատների։

Ուրախալի էր մեզ տեսնել և համոզվել, որ Դուք ազգասիրական աղնվությունը և քաղաքական իմաստությունն եք ունեցել կանխատեսելու, և՛ զգալու, և՛ գիտակցելու, որ Սփյուռքի Հայրենադարձն է միակ երաշխիքը անհարազատ հորիզոնների տակ դեգերող ու տարագիր զավակներիս փրկությանը ո՛չ միայն ազգային դիմադրկությունից, բարոյական դասալքումից, այլ նաև անխուսափելի ֆիզիկական կորստից։ Հարյուր հազարավոր հարազատների այս Մեծ Հայրենադարձը միաժամանակ անվերապահորեն հանդիսանալու է մի նոր ու խոշոր ազգակ մեր սիրեցյալ Մայր Հայրենիքի և մեր Ազգային Պետության զորացման։

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության հայրենասեր և ազնվամիտ այս գործունեությունը երախտագիտության ջերմ զգացմունքով է լեցրել հայրենադարձ զավակների հոգին և նոքա այսօր, ազգընտիր և ալեզարդ Հայրապետիս հետ միասին, իրենց ջերմ ողջույնները են վերառաքում առ Բարձրյալը՝ զորավիգ հանդիսանալու տակավին օտար աշխարհներում տառապող արենակիցներին, օր առաջ արժանանալու Հայրենադարձի երջանկության։

Փա՜ռք ու պատի՜վ ազգանվեր Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության և նրա հայրենաշեն աղնիվ ղեկավարներիդ։

Երկնային Տիրոջ Աջը հովանի լինի Միությանդ գլխին՝ առավելագույն իմաստությամբ և աղնվությամբ շարունակելու ազգասիրության և հայրենաշինության սուրբ գործը։

Աստուածային օրհնությունը անսպառ լինի Ձեր և Ձեր սիրեցյալ գերդաստանի ու հարազատների վերայից։

Արևշատություն և երջանիկ կյանք անձնվեր Հայրենասերներիդ։

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ-ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ի Ս.-ն դեկտեմբերի 1947 թ.
Ի Ս. Էջմիածին